# ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 15/01

ք. Արտաշատ «30» «հունվարի» 2015թ

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Արարատի մարզպետարանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրատու, մի կողմից և, Սպարապետ Վ.Սարգսյանի տուն-թանգարանը՝ ի դեմս Ամալյա Սարգսյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրառու, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածով, «ՀՀ 2015թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հավելվածի N 1-ի աղյուսակ N 1-ի ՀՀ Արարատի մարզպետարանին գումար հատկացնելու մասին» կնքեցին սույն պայմանագիրը:

*1. Պայմանագրի առարկան*

1.1 Սույն պայմանագրով և «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան հատկացումների շրջանակներում Նվիրատուն Նվիրառուին է հատկացնում 10039.6 հազ.դրամ/տաս միլիոն երեսունինը հազար վեց հարյուր ՀՀ դրամ/ պահպանման ծախսերի համար:

*2.Սուբսիդիան տրամադրելու և ծախսելու կարգը*

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

2.2 Նվիրառուն պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Նվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:

2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Նվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Նվիրառուի գանձապետական հաշվին, իսկ տեղական գանձապետական բաժանմունքը Նվիրառուին գումարները հատկացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

*3.Հաշվետվությունը*

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

*4.Այլ դրույթներ*

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

*5.Կողմերի իրավաբանական հասցեները*

| Նվիրատու | Նվիրառու |
|---|---|
| Արարատի մարզպետարան | «Սպարապետ Վ.Սարգսյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ |
| Ք.Արտաշատ,Օգոստոսի 23/26 | գ.Արարատ,Գարեգին Նժդեհի 7 |
| Ֆինանսների նախարարության ԳՎ | Հայէկոնոմբանկ Արարատ մ/ճ |
| h/h 900411068027 | h/h 163328029380 |
| հվհհ 04204668 | հվհհ 04213428 |
| Ա. Մարգարյան | Ա.Սարգսյան |
| /Աշխատակազմի ղեկավար/ | |